Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-1270-08.11.2011-ԱՄ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի (այսուհետև՝ օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «վիրաբուժական միջամտություն» բառերը փոխարինել «բժշկական միջամտություն» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը» բառերը փոխարինել «կառավարությունը» բառով:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 15-րդ հոդվածում՝

ա) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Փոխնակ մայրը միաժամանակ չի կարող լինել ձվաբջջի դոնոր».

բ) ուժը կորցրած ճանաչել 13-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առարկությունների և առաջարկությունների մասին

	Առաջարկության հեղինակը	Նախագծի փոփոխվող մասը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «2-րդ կետում» բառերը փոխարինել «1-ին մասի 2-րդ կետում» բառերով	Առաջարկն ընդունված է՝ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածները միացնել և ներկայացնել միասնական 2-րդ հոդվածի տեսքով	Առաջարկն ընդունված է՝ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով (նոր խմբագրությամբ 2-րդ հոդվածի ա/կետ) առաջարկվող Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչելու փոխարեն շարադրել հետևյալ խմբագրությամբ «փոխնակ մայրը միաժամանակ չի կարող լինել ձվաբջջի դոնոր:»	Առաջարկն ընդունված է՝ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները
4.	ՀՀ կառավարություն	Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մաս	Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը» բառերը փոխարինել «կառավարությունը» բառով	Առաջարկն ընդունված է՝ նախագծում ավելացվել է նոր հոդված
5.	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագիծ	Օրենքի նախագծով նախատեսվող փոփոխությունները ներառել Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացրած «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթում	Առաջարկն ընդունված չէ՝ քանզի ՀՀ կառավարությունը (հեղինակը) հետ է վերցրել իր ներկայացրած նախագիծը
6.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան Կ. Ավագյան	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանել «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերը	Առաջարկն ընդունված է՝ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները
7.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներով (նոր խմբագրությամբ 2-րդ հոդված) առաջարկվող Օրենքի 15-րդ հոդվածի «5-րդ կետը» և «13-րդ կետը» բառերը համապատասխանաբար փոփոխել «5-րդ մասը» և «13-րդ մասը» բառերով	Առաջարկն ընդունված է՝ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները

	Կ. Ավագյան			
8.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Ա. Բաբլոյան Մ. Մինասյան Կ. Ավագյան	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի (նոր խմբագրությամբ 3-րդ հոդված) «հրապարակմանը» բառը փոխարինել «հրապարակման օրվան» բառերով	Առաջարկն ընդունված է՝ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները